

ատենները Հայոց զերը յայտնի է, կը պակսին վկայութիւններ, սակայն անտարակոյս մեծ եղած ըլլալու է: Որոչ է որ ոսկեզարեան հայ կապերա բառը հայ ոսմկարիսն վաճառականներուն բերնին մէջ վերածուած կարգերի, ներմուծուած եւ ներկայացուած է Անգլիացոց: Անգլիացի ուղեգիր ճորճ Սանտիս 1610ին կ. Պոլիս այցելութեան ատեն կը գրէ. «Գլխաւոր ապրանքները որ մեր վաճառականները ասկէ կը տանին, Թուրքի գորգեր, այծսուեւ, մետաքս զիպակներ են: Անոնք հոս կը ստանան նաեւ բաւական քանակութեամբ հում մետաքս, եւ պարսկական գորգեր, Պարսկաստանէն հոս բերուած ցամաքի ճանապարհով՝ Հայ վաճառականներէ»<sup>(9)</sup>: Թէ Պարսկական եւ թէ Թուրքի կոչուած գորգերուն մէջ հայկական արտադրութիւնները անշուշտ գերակայ էին:

### ՀԱՐԱՒԱՅԻՆ ԵՒՐՈՊԱՅԻ ՄԷՁ

Անտարակոյս Սպանիական եւ Բորթուկալեան պատմական գրականութիւնը եւ անոնց պետական դիւանները Հայ պատմութեան, մշակոյթին եւ առեւտուրին համար ունին բազմատեսակ տեղեկութիւններ՝ ցարդ մեզի անձանօթ եւ անմատչելի: Պոտէ կը վկայէ որ «Լիզպոնայի ինչպէս նաեւ Ամստերտամի մէջ պարսիկներ կը բնակէին, որոնք զըլխաւորաբար Հայ վաճառականներ էին, եւ քրենց ներածած ապրանքին կարգին գորգը ամենայնաւոր յիշուածն է»<sup>(10)</sup>: Լիզպոնա եւ հաւանաբար Սպանիա գորգ կը ներմուծուէր արաբական Ալ Քադիֆ նաւահանգիստէն եւ ատոր սրտածառու ալ գորգերը այդ անուամբ կը ճանչցուէին առ հասարակ Բորթուկալի եւ Սպանիոյ մէջ, թէեւ բանիմաց Բորթուկալցի կամ Սպանիացի ուղեգիրներ կը վկայեն որ ԺՉ դարուն այդ գորգերուն կը տրուէին նաեւ իրենց շինուած տեղոյն անուններն ալ, ինչպէս «Տոսիպ», այսինքն Եպոտէն, Քիրման, եւն., որոնց մասին յետոյ պիտի խօսիմ:

Կ'ակնկալուէր որ զոնէ Իտալիոյ մասին աւելի ծանօթութիւն ունենայինք, բացի այն քանի մը պատաստիկներէն՝ որոնց կը հանդիպինք Հ. Ալիշանի ծանօթ «Հայ-Վենետ»ին մէջ: Կը վկայուի որ Վենետիկի Ս. Մարկոսի հրապարակին վրայ Մ. Շահնշահ (հաւանօրէն պարսկահայ մը) խանութ մը ունէր: 1596 Օգոստոս 16ին Չմիւռնիայէն իրեն զրկուած էր «Բոնիթէ» անուն նաւով մը «20 բեւ բամպակ եւ կապոց մի կապերտի»<sup>(11)</sup>: Սակայն ալ աւելի կարկառուն վկայութիւն է Հայկական գորգերուն Եւրոպա ներածուելուն սա պարագան, որ բազմաթիւ Եւրոպացի մեծահամբաւ նկարիչներ իրենց ստեղծագործութեանց

(9) A Relation of a Journey begun A. D. 1610, London, 1627, Vol. I, p. 86.

(10) Oriental rugs, etc., Dr. F. R. Martin, 1896, p. 74.

(11) Հայ-Վենետ, էջ 415: